

7109



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան



2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 095 - 24

Ձեռնարկողը՝

Խաչատուր Սաֆարյան

ք.Երևան, Ավան վարչական շրջան, Ն.Սաֆարյան փողոց հ.14/15

Գործունեությունը՝

Ավան վարչական շրջանի Ն.Սաֆարյան փողոց հ.14/15 հասցեում նախատեսվող կցաշար բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ:

քաղաք երևան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 095 - 24

« 21 » հունիսի 2024թ.

Ավան վարչական շրջանի Ն.Սաֆարյան փողոց հ.14/15 հասցեում կցաշար բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	Խաչատուր Սաֆարյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Ավան վարչական շրջան,

Ներածական մաս. Կցաշար բնակելի տները նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի, Ավան վարչական շրջանի Ն. Սաֆարյան փողոցի 14/15 հասցեում: Մոտակա բնակելի տները գտնվում են հողամասի սահմանագծից 9մ և ավելի հեռավորության վրա: Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 12.06.2023թ.-ին տրված N01118-0711-Պ-38392-320 ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու 01-002-0501-0169 կադաստրային ծածկագրով NFY2Y6ZQA8EC5 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվում է կառուցել կցաշար բնակելի տներ, որոնցից N1-N5 շինությունները կլինեն միատիպ՝ երկհարկանի, 8.6 մ առավելագույն բարձրությամբ: Արտաքին չափերը՝ ներառյալ երեսապատումը, մուտքի աստիճաններն ու հարթակները կկազմեն 43.95x13.6 մ:

Բնակելի տների առաջին հարկում նախատեսվում է նախասրահ, ավտոտնակ, սանհանգույց, հյուրասենյակ, խոհանոց և տեռասա, բարձրությունը կկազմի 3.30 մ: Երկրորդ հարկում



նախատեսվում է միջանցք, 3 ննջասենյակ, 3 սանհանգույց, 2 հանդերձասենյակ և 2 պատշգամբ, բարձրությունը կկազմի 3.30 մ: Բնակելի տների երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինով, տուֆով և դեկորատիվ քարերով, ցոկոլային հատվածում՝ բազալտով:

Կցաշար բնակելի տներից N6-N7 շինությունները նախատեսված են միատիպ՝ 13.2 մ բարձրությամբ, երեք հարկանի: Առաջին հարկում նախատեսվում է նախասրահ, ավտոտնակ, սանհանգույց, խոհանոց և տեռասա բարձրությունը կկազմի 3.30 մ: Բնակելի տների երկրորդ հարկում նախատեսվում է միջանցք, ննջասենյակ, 2 սանհանգույց, հանդերձասենյակ, հյուրասենյակ և խոհանոց, բարձրությունը կկազմի 3.30 մ: Երրորդ հարկում նախատեսվում է միջանցք, 3 ննջասենյակ, 3 սանհանգույց և 2 հանդերձասենյակ, բարձրությունը կկազմի 3.30 մ: Երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինով, տուֆով և դեկորատիվ բետոնով, ցոկոլային հատվածում՝ բազալտով:

Բնակելի տներից N8-N16 շինությունները նախատեսված են միատիպ, երկհարկանի՝ 8.60մ առավելագույն բարձրությամբ: Արտաքին չափերը՝ ներառյալ երեսապատումը, մուտքի աստիճաններն ու հարթակները կկազմեն 78.8x14.2 մ: Բնակելի տների առաջին հարկում նախատեսվում է նախասրահ, ավտոտնակ, սանհանգույց, հյուրասենյակ, խոհանոց և տեռասա բարձրությունը կկազմի 3.30 մ: Երկրորդ հարկում նախատեսվում է միջանցք, 3 ննջասենյակ, 3 սանհանգույց, 2 հանդերձասենյակ և 2 պատշգամբ, բարձրությունը՝ 3.30 մ: Բնակելի տների երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինով, տուֆով և դեկորատիվ բետոնով, ցոկոլային հատվածում՝ բազալտով:

Կցաշար բնակելի տներից N17 շինությունը երեք հարկանի է, արտաքին չափերը՝ ներառյալ երեսապատումը, մուտքի աստիճաններն ու հարթակները կազմում են 10.6x14.2 մ, բարձրությունը՝ 13.2 մ: Բնակելի տան առաջին հարկում նախատեսվում է նախասրահ, ավտոտնակ, սանհանգույց և խոհանոց: Հարկի բարձրությունը 3.30մ է: Երկրորդ հարկում նախատեսվում է միջանցք, ննջասենյակ, 2 սանհանգույց, հանդերձասենյակ, պատշգամբ, հյուրասենյակ և խոհանոց: Հարկի բարձրությունը 3.30 մ է: Երրորդ հարկում նախատեսվում է միջանցք, 3 ննջասենյակ, 3 սանհանգույց և 2 հանդերձասենյակ: Հարկի բարձրությունը 3.30 մ: Երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինով, տուֆով և դեկորատիվ բետոնով, ցոկոլային հատվածում՝ բազալտով:

Հողամասի կառուցապատման ցուցանիշներն են՝

- հողամասի մակերեսը կազմում է 446418 քմ,
- կառուցապատման մակերեսն արտաքին պատի արտաքին եզրագծով՝ առանց մուտքի աստիճանների և հարթակների, կազմում է 1887.3 քմ,
- կառուցապատման մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով՝ ներառյալ մուտքի աստիճանները և հարթակները կազմում է 2229.0 ք.մ:
- կանաչապատման մակերեսը՝ 1785.7 քմ,
- մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 791.18 քմ.,

բնակելի տների քանակը՝ 17,
ավտոտնակների քանակը՝ 17:

Տների սանհանգույցներից և խոհանոցներից նախատեսված են արտաձման համակարգեր: Արտաձման համար նախատեսված օդատարներն առանձին-առանձին մտնում են հորանի՝ հատուկ նախատեսված օդատարի մեջ, մեկուսացվում են բազալտե հանքաքարաբեկով և



բարձրանում են 2,5 մ: Տների բնակելի մասի միջանցքներից և ավտոտնակից իրականացվելու է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղները տեղակայվելու են տանիքի վրա:

Տների էներգաարդյունավետության մակարդակը բարձրացնելու համար նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ, ջերմամեկուսիչ շերտով, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգով՝ ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող 100 մմ հաստությամբ ջերմամեկուսիչ շերտն ապահովում է արտաքին պատերի ջերմային դիմադրությունը: Տների տանիքները նախատեսված են հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար:

Կցաշարային բնակելի տների տանիքները հարթ են՝ ուղղորդված ջրահեռացմամբ:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվելու են շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում վարձակալելվելու են այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում շաղախն ու բետոնն առաքվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ 280 խմ ծավալով, ինչն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը՝ ամսական մեկ մարդու հաշվարկով 6կգ կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 1500 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Տների ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին: Ջրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել Ն.Սաֆարյան փողոցով անցնող D=500 մմ ջրատարից, իսկ ջրահեռացումը կատարվելու է միանալով նույն փողոցով անցնող D=400 մմ կոյուղատարին: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով, իսկ աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն գործող պայմանագրի: Բնակելի տների ջերմամատակարարումը և տաք ջրամատակարարումը կիրականացվի անհատական ջրաջեռուցիչ էլեկտրական կաթսաներով:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 2500 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող 1500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է 100 խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման,



արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել ջրցան,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,

- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակը, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ,

- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար,

- հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների և շինարարության ժամանակ, տրամադրվելու է 2240000 ՀՀ դրամ:

Ըստ նախնական գնահատման հայտի և ներկայացված հնագիտական ուսումնասիրության եզրակացության՝ գործունեության իրականացման տարածքը զուրկ է մշակութային շերտերից:



Չորս հետախուզահորերում չեն փաստվել կառույցների, շարվածքների հետքեր, դամբարանների վկայություններ կամ հնագիտական առարկաներ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Ավան վարչական շրջանի Ն.Սաֆարյան փողոց հ.14/15 հասցեում նախատեսվող կցաշար բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:

- Կառուցապատման գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Մարդու առողջության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, իրականացնել ցանկապատում, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ և այլն:

- Բետոնի տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի արտադրությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինին:

- Աշխատանքներն իրականացնելուց առաջ փոխել հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատումից բնակավայրերի բնակելի կառուցապատման:



-Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

-Անհրաժեշտ է իրականացնել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում

-Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակներն անհրաժեշտ է պարսպապատել, կառուցվող շինություններն անհրաժեշտ է ծածկել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

-Նոր կառուցվող կցաշար բնակելի տների էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներն իրականացնել համաձայն Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N426-ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների համաձայն:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Խաչատուր Սաֆարյանի կողմից ներկայացված Ավան վարչական շրջանի Ն.Սաֆարյան փողոց հ.14/15 հասցեում նախատեսվող կցաշար բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Երիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան